

ՀԱՆԴԷՍ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԵՎԱՆՔԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՅ Ի ԳԱՂՂԻՍ

Պաղղիա՝ Գերմանիոյ Հետ պատերազմի մտնելէն առաջ պէտք էր լսու հանձնար դաշնիկա. բայց նոյն իսկ այսօր թէ և պարտեցաւ, սակայն կրնայ տակաւին քննել ու իմանալ անոր ուժոյն և առաւելութեանց պատճառները, և գտնել զօրաւորագոյն ևս միջոց կամ հնարք՝ յաղթելու անոնց կամ գէթ չվարնալու անոնցմէ: Արգելու գերմանական ցեղին նախանձն ընդդէմ շտապեցողից, ասիկա բացարձակապէս անկարելի է. գաղղիական հողը հարուստ է, կլիմայն քաղցր, երկինքը պարզ ու պայծառ. իսկ այն ժողովուրդը որ ծնած են անդր քան զՀռենոս, մանաւանդ Ստեր և Վիսգուլ գետոց մօտ բնակողք, պիտի ուզենան միշտ արշաւել ու տիրել այդ երկրին ու կլիմային, և ապրիլ քաղցրաշունչ օգոց տակ, զոր ընտելութիւնը չնօհած է Գաղղիոյ:

Գերմանական ազգը միշտ պատերազմական եղած է. ընդունայն տեղ երկար ժամանակ ընդդէմացան անոնց Հռովմայեցիք, որոց հպատակեցան կելտք մեծագոյն չարիքէն գերմանելու համար, և հարկեցան միանալ տիրապետողաց Հետ, ինչու որ Գերմանացոյն ու Գոթացոյն ետեւէն ուրիշ բարբարոսք կը յառաջէին, տգիտագոյն ու վայրենագոյն: Բոլոր գերմանական ազգիք Աստիլապայ Հետ արշաւեցին Գաղղիոյ վրայ, և այնպիսի նախճիր ու արհաւիրք գործեցին՝ մինչև ահաբեկեցան կելտք. բարբախտաբար տիրողք կելտական երկրին, հանգերձ իրենց տարբեր ազգայնութեամբ՝ միաբանեցան հասարակաց վտանգին դէմ, և բարբարոսական ծանր կոտորած մը մերժեցին ի Գաղղիոյ:

Տիրելէն ետքը կը մնար մերձեցնել կել-

տացին իր ահաւոր տիրոջը՝ որ կրօնիւք միայն կրնար յաջողիլ, առ որ ուղղադաւան երեւելի եպիսկոպոսունք թափեցին բոլոր իրենց եռանդն ու հանճարը: Այն օրը յորում պատերազմի դաշտին վրայ կլովիս թողեալ իր աստուածներէն՝ օգնութեան կանչեց կլովիտայ Աստուածը, խրախուսիչ ակնկալութիւն և անբացատրելի ուրախութիւն մը տիրեց կելտացոց բանակին մէջ, որք յարձակեցան արութեամբ հեթանոս Ալեմանաց դէմ. և այս անգամուն ալ պաշտպանեալ ի բարբարոսաց, ազատեցաւ կելտական քաղաքականութիւնն ի սպառնալու կործանմանէ:

Կելտացին տակաւին յետին յուսահատական վտանգի մէջ չէր. կլովիսի որդւոց տարածայնութիւնքն առիթ կամ պատճառանք մ'եղան Աստորասիացոց և բոլոր գերմանական ցեղին, զորս կրօնքն իսկ չէր ամրած, արշաւելու գաղղիական արգասաբեր ու հարուստ արտօրէից վրայ: Երկու կանաչք ապագային առջին անձնաւորեցին այս նոր կռիւը կամ վէճը, Պրունէհաւը և Պրէտիկոնտ, որոց անունը քիչ շատ ծանօթ է: Բայց որովհետև նոյն ատենները կիլերերիկոս Նեադրիոյ Թադաւորն՝ սնիտհեմարը և յանխորհուրդս համարձակեր էր քարոզել և նաև հակիլ Արիանոսաց կողմը, մերժելով Քրիստոսի Հօր Աստուծոյ Հետ հաւասարութիւնը, անոր համար շատ սիրելի չէր կղերին, որ նախապատիւ կը դնէր քան զինքը Աստորասիոյ Թագաւորը, ուղղափառ առաջնորդ ահաւոր բարբարոսաց, և զՊրունէհաւը, պաշտպան անգղիական առաքելութեանց: Բայց կելտացիք կ'ընտրէին աւելի կիլերերիկոսի Հետ ըլլալ, քան ուրիշ ան-

գամ մ'ալ ընկճիլ ընդ իշխանութեամբ հրուսախումբ ամբոխի բարբարոսաց. վասն որոյ Յրէտիկոնտ պաշտպանեց զԵլետացիս նենգութեամբ, սորոթեամբ, ինչուան նաև երբեմն եղեռնազործութեամբ:

Սակայն Նեսդրասիտցոց յաջողութիւնքն երկարատև չեղաւ. վասն զի եօթնհարորդ դարուն վերջեր՝ Աստուսիոյ վայրենաբարոյ Գերմանացիք Հերիսդալաց առաջնորդութեամբ՝ հանեցին իրենց վրէժը, և տէր եղան բոլոր Ելետաստանի: Գուրցուած է շատ անգամ որ Կարողոս Մեծն Հերիսդալաց ամենէն հռչակաւորն՝ վերջ տուած ըլլալ բոլորովին գերմանական արշաւանաց, բայց վրիպակն է ասիվա. դիմեց նա Սաքսոնաց դէմ տակաւին բարբարոսաց, ստիպեց զանոնք ՚ի հպատակութիւն և ՚ի մկրտութիւն, և ձևացուց ՚ի բոլոր ազգաց՝ առջինէն աւելի զօրաւոր ու միացեալ բանակ մը:

Երբոր Կարլովինկեան կայսերութիւնն ՚ի մատենա բաժնուեցաւ, գերմանական Թագաւորք շատ ջանացին արգելուլ Ելետացիքը առանձին ազգութիւն կազմելէ: Բարիգ տեսաւ իր չըջկալքը յաւար և ՚ի կողպատու մատենալ, և լսեց Մոնարքրի վրայ Ոթոնի Բէ գերմանական բանակին ջգից Աստուած գովաբանական երգը երգելն մեծաձայն: Բայց զԳաղղիացիս ՚ի մեծ աղէտից և ՚ի վտանգաց փրկողն միայն նոցա հարց արիւսարտութիւնը չեղաւ, այլ աւելի գերմանական կայսերաց զանազան կողմ ըրած արշաւանքները: Իտալիան նուաճելու ու խոնարհեցնելու համար Ոթոնք և Փրեդերիկոսք ժամանակ տուին չունչ առնել Գաղղիոյ: Մէկ անգամ միայն Ոթոն Գ., մեգդիացոց ձև տ միացած փորձ փորձեց Ելետացիները զԳաղղիացիս, բայց խորտակեցաւ կորակոր: Գաղղիական ազգը միասիրտ ու միահաւան Թագաւորի մը չորս կողմը խմբեալ, տեսնելով ՚ի նմա զԳինգանի նշան միութեան և անկախութեան, հաստատեց՝ սուր ՚ի ձեռին, որ ոչ նիգակակից և ոչ հարկատու կ'ուզէ ըլլալ գերմանական ժողովուրդեան:

Շատ ժամանակ յետոյ, Կարլոս հինգերորդ Թագաւոր Սպանիի և Նաբոլիի, զուրք Միլանու, իշխան Հոլանտայի, կայսր Գերմանիոյ և տէր Սմերիկոյ, զանազան անգամ Գաղղիոյ վրայ յարձակեցաւ ՚ի հարաւոյ և յարենից-հիսիսոյ. բայց պատահաւս կրօնական գծտութեան որով խռովուիլը այն ատեն գերմանական պետութիւնը, ազատեցաւ Գաղղիա: Իշխանք Գերմանիոյ հակելով կամ չեղելով ՚ի լուստերականութիւն, և խորշելով կայսերա-

կան գերագահութենէ, կը խնդրեն Գաղղիոյ օգնութիւնը, խոստանալով փոխարէն զՄէց, զԹուլ, և զվէրտօն: Եւ Ալաբերտ մարքէզ Պրանտէպուրկի և նախաձայր Թագաւորաց Բրուսիոյ, անձամբ լուսկու գայ ու կը ներկայացնէ առ Հենրիկոս Բ, այդ պայմանը:

Կարլոս հինգերորդ Մէցի վրայ կը յարձակի, բայց Լորենացոյ մը քաջութեամբ կ'ազատի քաղաքը. Փրանկիսկոս տը Կիզ, յետ քաջակորով ընդդիմադրութեան, կը բռնադատէ զկայսրը բառնալ պաշարումը յամին 1555 յունուարի 20: Այս պարագայ մէջ Պրանտէպուրկի սաջմանակումը, ագահ ու անհաւատարիմ աշխատիրի անուն կը ժառանգէ. վասն զի յետ պաշտպանութիւն գտնելու ՚ի Գաղղիացոց, յանկարծ կը կապաւորի ՚ի Կարլոսէ հինգերորդէ, և քսան հազար զօրաց բանակով կը խորտակէ գաղղիական ութ հազար զօրաց գունդը, և կ'առնու երկու կողմանց պարգևները ու աւարները:

Պէտք է Գերմանիոյ առջին ոչ անհոգանալ և ոչ պառակտիլ. երբ կրօնական գրծտութիւնն փայլեցաւ ՚ի Գաղղիա արհնահեղ մոլիգնութեամբ, և երբ Թագաւորական իշխանութիւնն արհամարհուեցաւ ու յաջորդութիւնն սպառնացաւ, անդրահռնոսեան բանակն արշաւեց նորէն Գաղղիոյ վրայ, պատճառանօք պաշտպանելու իրենց կրօնակից բողոքական եղբարքը: Գերմանական հետեակը և լուստերական հեծեալք, աւերեցին ու կողոպտեցին Շամբանեա գաւառը, Լուառի ափունքը, և մինչև Բարիլոտ վրայ քալել ուղեցին. բայց ընդ առաջ ելաւ նոցա ՚ի Վիլմորի՝ զՄէց պաշտպանողին որդին Փրանկիսկոս Բ, տը Կիզ, որ վատթարեց զանոնք ահաւոր կոտորածիւ. որով հարկեցան ուրիշ ժամանակի թողուլ Գաղղիա արշաւելու առաջարկութիւնը, և կանայք ու տղայք զորոնք միաստիգ բերեր էին, հազիվ կրցան հասնել ՚ի Գերմանիա մեծաւ նեղութեամբ ու տառապանօք, և ունանք Գաղղիա մնացին:

Կը դադրին վերջապէս ՚ի Գաղղիա կրօնական խռովութիւնը, Թագաւորութիւնը կը զօրանայ, և ոտն առ ոտն յարգ կ'առնու ազգին առջև: Իշխիւտ խառտութեամբ կը նուաճէ մեծամեծները, և վտանգաց մէջ ցուցած քաջասրտութիւնը՝ կ'աւելցնէ իր վրայ ժողովուրդեան վստահութիւնը: Երբ Կալլաւ Գերմանական զօրավայրը իր յարձակելի Պուրկոննի վրայ, և իր զինակիցը մտնելով ՚ի Իլեարտիա՝ կը գրաւէր քաղաքներն առանց հարուածոյ, կարդինալ պաշտօնեայն կ'աշտանակէ յերիվար, և կը

գրգռէ ու կը յորդորէ զամենքն 'ի դէն, և տասներէնդ օրուան մէջ քառասուն հազար զօրաց բանակ մը կը կազմէ, և կը յարձակի ու կը վանէ զՔշնաժին: Նոյն իսկ արքեպիսկոպոստնք օրինակ ու հրամանատար կ'ըլլան զօրաց 'ի պաշտպանութիւն հայրենաց:

Լուգովիկոսի Ժ.Վի իշխանութեան ատեն, Վաղղիոյ բախտը կը փայլի, բոլոր զեւրոպէ դողացնելով, ինք զինքը մեծարոյ կ'ընէ ու կ'ընդարձակէ տէրութեան սահմանը: Գիւրէն կ'անցնի Վոսկեան լեռները ձմեռային եղանակի մէջ, կը խոյանայ Գերմանացւոց վրայ՝ մինչդեռ կը կարծէին թէ տիրած ըլլան Ալապիոյ, կը ցրուէ դանոնք ու զի փակցնէ անդր քան զՀռենոս: Երբեք մէկ գլխոյ և մէկ իշխանութեան տակ ազգի մը միութիւնը այսչափ զօրաւոր և աշակերտ եղած չէր. վասն զի բան մը չէր պակասէր և չկար անկարելի ինչ, այլ ամեն կողմանէ յաղոցութեան գործիքն ու պատկուծութեան պատիժը բաւեց: Ընտիր զօրապետներն ու մեծահանճար պաշտօնեայքն մեռեր էին, կարծես ամենայն ինչ ծերացեր և հնաքեր էր իր չորս հոգոյք: 1712ին Վաղղիա ամեն կողմ յաղթուեց, Մալպուրկի Անգղիայոյն ու Եգիպտոսի Գերմանացւոյն գիմարելու համար՝ մէկ բանակ մը միայն ունէր, որոնք շատ սու պատնէշներ կանգնելով, զրօյմեր էին վրան այս սպառնական գոտիները. ճանապարհ 'ի Բարիզ՝ Բարեբախտաբար Լուգովիկոս Ժ.Վ անկորուստ պահէր էր տակալին իր անձնական քաջասրտութիւնը, Վիսլարի հանճարը և իր հպատակաց անյողզողդ հաւատարմութիւնը, որք կը յարգէին Միսապետին իշխանութիւնը կրօնական մեծարանքը: Վիլլար իր վրան անոնց այս վերջին բանական մանաւորութիւնը. զինուորք կը տանէին անտրտունջ ամեն տեսակ զրկմանց ու նեղութեանց, որով 'ի նեղ արկին թշնամոյն պատնէշները, և չբեղ յաղթութեամբ արգատեցին զՎաղղիա դաշնակցեալ տէրութեանց ծածուկ մեքենաւորութիւնէն. և գրեթէ ամբողջ դար մը, մինչև զազգիական յեղափոխութիւնը, գերմանացիք չարաւեցին 'ի Վաղղիա:

1792 տարւոյն վտանգը շատ աւելի մեծ էր. այլ Տիւմորէն իր յաղաքաւոր հանճարով ազատեց զՎաղղիա, և քիչ ետքը հասարակապետական եռանդը մեծամեծ գործեր կատարեց. Աղգային ժողովը (Con-

vention) բոլոր Վաղղիոյ սահմանները վերահաստատեց ու ապահովեց, և տեսաւ զԲրուսիա և զԱւստրիա դողալով գալ յոտս իւր և խոնարհել խնդրելով զհաշտութիւն: Այս երկու տէրութիւնք փոփոխակի անվտանգ էին իրարու վրայ, որ Վաղղիոյ համար մեծ բարիք մը բախտ մ'էր. վասն զի ատով և ոչ մէկն կրէալ զօրանալ այնչափ քան զմիւսն, մինչև ստիպել զբոլոր Գերմանիա միանալ իր բացարձակ իշխանութեան տակ, Թիւրինի քաղաքին Մէրլին Աղգային ժողովոյ անդամը ուզեց բառնալ այս փոփոխակի նախանձը՝ հանելով Պաիէրան Աւստրիոյ ձեռքէն: Ըստ Մէրլինի՝ Վաղղիա չէր կրնար երջանիկ ըլլալ մինչև որ գերմանական ատուծունք զիրար չպատառէին, և խաղաղութիւնն չըլլար 'ի կորուստ և 'ի վնաս երկու նախանձընդէմ տէրութեանց: Այլ մարդկային պատշաճութիւնն, պատուոյ խնդրին և արեւակցութեան կապն և ուրիշ պատճառք, 'ի դերն հանեցին Մէրլինի խորհուրդը, վասն զի Աւստրիա և Բրուսիա փոխանակ իրարու դէմ գարնուելու, ինչպէս փափաքելի էր, միայն իրարու հետ ընդգէմ Վաղղիոյ, և մեծագոյն ստանալ սուրին իրեն զխաղաղութիւն յամին 1795:

Այնչառ տասն և ինն տարի, և բոլոր պետութիւնք դաշնակցեալք, արշաւեցին կըրկին անգամ Վաղղիոյ վրայ և մանաւանդ Նաթոլէնի. որ հանդերձ իր պատերազմափորձ հանճարովիքն ընկճեցաւ անոնց ատջին, վասն զի նախ չունէր բաւական զօրութիւն ընդգրկմադրելու, և երկրորդ վասն զի ազգն յոգնած ու նեղուած ըլլալով իր միահեծան կառավարութեանէն, և չճանչնալով իր Բրուսուրքը, կը թշնամանար հետը փոխանակ պաշտպանելու: Յամին 1814 մարտի 12, կը սարգէ Պորտոյ սպիտակ դօրը. և Պուրպոնը՝ զորս յաղթականք Վաղղիոյ կը վերահաստատեն յաթոյն, միայն այս արշաւներն կ'ունենան որ չեն ուզեր յերկուս ճեղքել զՎաղղիա, այնպիսի վտանգաւոր ատեն:

1815ին Լուգովիկոս Ժ.Բ, ջանաց Բարիզ հասնիլ դաշնակցեալ պետութեանց հասնելն առաջ և պայմանագրել անոնց հետ իւրեք թագաւոր Վաղղիոյ, արդէն ծանուցեալ 'ի հպատակացն. այլ վատախորհուրդ թելագործիւնք և մատնութիւնք՝ վրիպեցին վերքը այս ազնուական մտածութեանէն. սակայն Լուգովիկոս և իր պաշտօնեայն դուքսն Ռիչլիէ միշտ պիտի անմահանան 'ի պատմութեան, որ պահեցին Վաղղիոյ բնական սահմանազրկութիւնը, գրեւման ժամանակը երեք տարւոյ վերածեցին և պա-

տերազմի տուգանքն 800 միլիոնի իշու-
ցին:

Բայց 1870 տարւոյն գերմանական ար-
չաւանքն ու հարուածն շատ աւելի մեծ ու
ահաւոր եղաւ Վաղդիոյ քան առաջին կայ-
սերութեանը. ամենայն ինչ ոտնակոխ ե-
ղաւ. պատիւ, կրօնք, հայրենասիրութիւն
և քաղաքականութիւն. միով բանիւ նիւ-
թականն ու բարոյականն խաղալիք եղան
Գերմանիոյ ձեռքը: Ընկերութեան իւրա-
քանչիւր անդամը ունեցան իրենց առան-
ձին տուգանքն ու վնասը. քրիստոնէին եւ
կեղեցիքին կողոպտեցան ու քահանայրն
հրաշքանքի բռնուեցան. զինուորական հա-
մագգեստն անարգեցաւ և մատնութեամբ
ու զինաթափութեամբ անպատիւ եղաւ.
Ճշմարիտ հայրենասիրին յաղթանակաց կո-
թողներն տապալեցան ու հայրենիաննեղ
գաւաճանութեամբ նուաստացան. պատ-
ուաւոր քաղաքացւոյն իրաւունքն ու արդա-
րութեան պահանջն ոտքի տակ գնաց. ի-
մաստոյն ու արհեստաւորին գրատունքն
հրոյ մատնեցան և հոյակերտ յիշատակա-
րանքն կործանեցան. գրամատենաց հա-
սարակաց ու առանձնական ինչքը վտան-
գեցաւ, և վաճառականին ու հողագործին
առուտութիւն ոչնչացաւ. միով բանիւ ամ-
բողջ Վաղդիա անկերպարան վիճակ մ'ա-
ռաւ:

Բայց ինչ էր արդեօք այս խեղճութեանց
պատճառն. անշուշտ ոչ այնչափ գերմանա-
կան սուսնայք՝ որչափ ներքին անմիաբանու-
թիւնք ու բարոյական եղծումներ, որ 'ի ներ-
քուստ տկարացուցեր էին զՎաղդիա և
Վաղդիական ազգն միշտ մեծ է. ոչ հան-
ճար կը պակասի իրեն, ոչ գրամ և ոչ զօ-
րութիւն. ոչ արտաքին թշնամին այլ ներ-
քինը միշտ վնասած է իրեն. անոր համար
ջանալու է յաղթել այս ներքին թշնամւոյն՝
որ է անմիաբանութիւն. մաքրել զՎաղդիա՝
բախտախնդիր խռովայոյց և ընկերութեան
թշնամիներէն, և արձակ ճանապարհ ու
ասպարէզ բանալ առաջի կարող և հանճա-
րոյ մարդկանց, որ սիրող ըլլան հայրե-
նեաց, կարգաց և խաղաղութեան: Պէտք
է պաշտպանէ ոչ զայս կամ զայն կուսա-
կցութիւն, ոչ զայս կամ զայն կառավարու-
թիւն, այլ զլաւն և զօգտակարն: Կուսա-
կցութիւնք միշտ ազիտաբեր եղած են, և
չեն ալ կրնար օգտակար ըլլալ. որոնք դժ-
բախտաբար 'ի բազում տեսակ կը բաժ-
նուին 'ի Վաղդիա. հասարակապետութիւն
կապտոյ և հասարակապետութիւն կար-
միր. հասարակապետութիւն աղտուական

և հասարակապետութիւն արմատական
կան նոյնպէս շատ տեսակ կայսերութիւնք.
կայսերութիւնն առհմանադրական և կայսե-
րութիւն գիկտատորական. կայսերութիւն
յեղափոխական և կայսերութիւն պահպա-
նողական: Կան դարձեալ շատ կերպ և տե-
սակ թագաւորութիւններ. թագաւորու-
թիւն խորհրդանոցական և թագաւորու-
թիւն բացարձակ. թագաւորութիւն եռա-
գոյն և թագաւորութիւն սպիտակ. և ո՞ր
մէկն համրենք. որոնք ամենքն իրենց կու-
սակիցն ունին, և կը խորհին ու կը գործեն
'ի վնաս միմեանց. փոխանակ զի ասոնց
տեղ պիտի տիրէր հասարակաց կարգ, ըն-
կերական կարգ, սեփականութիւն, ըն-
տանիք, պատիւ, բարոյականութիւն, խղճ-
միտանք և Աստուած:

Ժողովուրդը կարօտ է հրահանգութեան,
լուսաւորութեան և բարոյական ուղղու-
թեան, զորոնք ստանալու համար զօրաւոր
միջոց մը փնտռելու է. վասն զի ոչ ասոն-
նական գեղեցիկ ճառախօսութիւնք՝ զորոնք
չի լսեր, և ոչ օրաքիթք՝ զորս չընթեռնուր,
կրնան օգտակար ըլլալ Վաղդիոյ: Բայց ոչ
թէ միշտ գրեանք են կրթիչք ժողովրդեան,
կը կրթութիւն և խօսքով, թէ որ խօսքն լու-
սաւորեալ ու պատուաւոր անձէ մը յառաջ
գայ. բայց ընչհակառակն բախտախնդիր
ու անպատիւ անձէ մը յառաջ գալու որ
ըլլայ, ժողովուրդը ոչ թէ միայն չի կրթութիւն
այլ և եղծաբարոյ կ'ըլլայ: Ինչ ըսել է ու-
րեմն ասիկա. ըսել է թէ առանց բարոյա-
կան օրինաց և սկզբանց՝ սոսկ գիտութիւնը
վնասակար է քան թէ օգտակար, որուն
ճշմարտութեանն օրինակ ըլլայ Վաղդիա:
Տուէք ժողովրդեան մը ամեն կարելի գի-
տութիւն, հարստութիւն և զօրութիւն ա-
ռանց բարոյականի. և կը տեսնաք որ նոյն
ժողովուրդէն ուրիշ բան յառաջ չի գար՝
բայց եթէ աւագակաց խուժը մը: Իսկ եթէ
նիւթական գիտութեան հետ բարոյական
ալ միացուցած ըլլայ, անկէ ետքը ոչ իր ե-
պիսկոպոստները կը սպաննէ և ոչ քահա-
նայրը. հրացանի կը բռնէ, ինչպէս պա-
տահեալ 'ի Վաղդիա, ասկէ երեք տարի
առաջ:

Ուրեմն և թէ կ'ուղէ Վաղդիա զօրաւոր
ըլլալ և վախ չունենալ Գերմանիայէն իր
նախանձընդդէմ թշնամիէն, ամեն բանէ
առաջ ջանալու է կուսակցութեանց վեր-
ցուելուն, միութեան հաստատուելուն, և
բարոյապէս ազգը զօրացնելուն. առանց ու-
րոց չի կայ ոչ զէնք, ոչ բանակ և ոչ յաղ-
թութիւն: